



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

11.349

1965

ՀԱՅ ԱԶԳԻ

ԿԱՏԱՂԻ ԹՇՆԱՄԻՆ

Արտատպած „ԱՐՋԱԳԱՆՔ“ շաբաթաթերթից:

*Հայաստանի Գրականության
Կենտրոնի Գրադարան*

ՆՈՒԷՐ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ

ԹԻՖԼԻՉ

Տպարան Մովսես Վարդանյանի:

1889

01 SEP 2011
01 AUG 2007

ՀԱՅ ԱԶԳԻ

ԿԱՏԱՂԻ ԹՇՆԱՄԻՆ

Արտատպած „ԱՐՁԱԳԱՆՔ“ շաբաթաթերթից:

ՆՈՒԷՐ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻՆ

ԹԻՖԼԻՉ

Տպարան Մովսես Վարդանեանի:

1889



13.06.2013

11, 579

Доз. ценз. Тифлисъ, 27-го Февраля 1889 года.

Типографія М. Вартанянца, Тройц. пер. д. № 11.

Անձ. արտատպած դնում ենք Հայ վաճառականի դազ-
գայի վրայ պ. Աբգ. Յովհաննիսեանի մարգարտաշար յո-
ղուածները, որոնք երկու ամսից աւելի զբաղեցրին Թիֆլիզի
լրագիրներին եւ տաք-տաք վիճաբանութեան ու գրգռուած
խօսակցութեան նիւթ տուին ղվօրցօվայեա ու միջի փողոց-
ներին, քարվանսարայներին ու բազազխանին, դեռ բողնելով
մի կողմը Հայոց միւս քաղաքները, աւաններն ու շէները:

«ՀԱՅ ԱԶԳԻ ԿԱՏԱՂԻ ԹՇՆԱՄԻՆ» վերնագրով կերուած
յօղուածներն անհատնում ամբար էին ամենաազնիւ ածական-
ների, ամենաքանկազին հուշունքների. այդ հուշունքներից պ.
Աբգ. Յովհաննիսեանը անտիքա ուստայութեամբ շարեց շի-
նեց մի երկայն տերողորմեայ ու կախ տուեց Հայ վաճառա-
կանների վզից եւ այն օրից մինչեւ այսօր վաճառականները—
փերեզակ, վաշխատու, դրամատեր, թէ կապալաու. եւ—այդ
նոր կարգի պատուանշանով կրծքները զարդարած գնում են
ձեռքը սեղմում բանկի մեծ դազգայի էտեւը նստած մեծ
դրամակուլին, որ նոյն ինքը մեծապատիւ պ. Աբգ. Յովհան-
նիսեանն է: Եւ պ. Աբգ. Յովհաննիսեանը միանգամայն ջե-
խորշում ձեռք տալ նրան, որի «կազմը բովանդակ նեխուած
է. անհնարին է գտնել մի առողջ տեղ այդ կազմի մեջ, որի
վրայ կարելի լինի մատ դնել եւ յետ վերցնել չապականուած»:
Օ՛, սապնն, սապնն ու ջնր, կարբօլեան բքն:

Միծաղելի է, ծիծաղելի է եւ միեւնոյն ժամանակ արտասուելի: Ի՛նչ անողոք կարիք է այն, որ հարկադրում է մէկին դեռ ելի ձեռք մէկնել միւսին: Պարզ երեւում է, որ այդ կարիքի բոցերի մէջ ազնուօրին, պատուի զգացմունք, անճնասիրութիւն ու սկզբունքի ամբողջութիւն այրվում են ու կորչում: Գրականականների մէջ եւս կան խոշոր օրինակներ՝ բրդողների ու բրածո լիզողների:

Եղբայր վաճառականներ, պ. Աբգ. Յովհաննիսեանին էլի պէտք է ջոկենք բանկի դիրքետօր—մեծ դազգայի ուստա: Լաւ կարդացէք նրա գրած այս յօդուածները եւ եկէք իստակ սրտով նրա համար շար տանք, սպիտակ գցե՛նք:

Մեզ էլ պատիւ, իրան է՛լ:

Հ Ա Յ Ա Ջ Պ Ի

ԿԱՏԱՂԻ ԹՇՆԱՄԻՆ

I.

Մինչեւ վերջին ժամանակները բացառապէս եւ այժմ մեծ մասամբ օտարները Հայ անուան հետ ծանօթանում են վաճառականների միջնորդութեամբ: Իւր գործունէութեամբ Հայ վաճառականը մեր մէջ միակ տարրն է, որ ստեպ-ստեպ շփվում է օտարների հետ աշխարհի զանազան կողմերում: Այս պատճառով նա մի տեսակ նմուշ է, որի համեմատ օտարազգիներն՝ այսպէս թէ այնպէս գաղափար են կազմում Հայ ազգութեան մասին:

Բուն ժողովուրդը, որ կազմում է գիւղական հասարակութիւնը՝ այստեղ եւ այնտեղ անճատուած ապրելով իւր բուն մայրենի հողի վրայ, յարաբերութիւն չունի լուսաւորուած երկիրների հետ: Ուստի շատ անգամ նրա գոյութիւնը չի ել յիշվում քաղաքակրթութեան օտարների կողմից:

Նոյնը կարելի է ասել եւ մեր ժողովուրդի միւս դասակարգի—արհեստավորների մասին: Այս երկու մաքուր տարրերը, որոնցից է իսկապէս բաղկացած Հայ ազգը, օտարների աչքում մի տեսակ մութ պատկեր են ներ-

կայացնում, որի վարագոյրը դեռ մինչեւ այսօր շարունակվում է փակ մնալ: Մնում է, բացի վաճառականներից, մեր լուսաւորուած դասակարգը, որ փոքր ի շատէ շփվում է օտարների հետ: Բայց այդ շփումն այնքան աննշան է առայժմ, որ հազիւ թէ ամբողջ ազգի քաղաքական, տնտեսական եւ մտաւոր-բարոյական վիճակը կարող լինի դրանով լիովին պարզուել օտարների աչքում: Կրկնում ենք, դեռ մինչեւ այսօր միայն վաճառական դասակարգն է, այսպէս ասած, համաշխարհային հանդիսավայրում մեր գլխաւոր ներկայացուցիչը, մեր գոյութեան կենդանի ապացոյցը:

Այդ ճշմարտութիւն է, բայց դառն եւ ցաւալի ճշմարտութիւն: Ունենալ օտարի առջեւ մի պատմական ազգի գոյութեան ներկայացուցիչ մի դասակարգ, որի կեանքի նպատակը լոկ նիւթականն է, այդ ոչ միայն ցաւալի է, այլեւ վնասակար: Իսկ ունենալ Հայ վաճառականի նման մի ներկայացուցիչ, այդ կատարեալ մի դժբախտութիւն է:— Մի դժբախտութիւն, որ այսօր անողոք ճակատագիրը վիճակել է Հայ ազգին: Հայ վաճառականը Հայ ազգի կատարեալ թշնամին է, եւ մենք կռենք, որ չկայ աւելի վտանգաւոր, աւելի անխիղճ եւ աւելի բարբարոս թշնամի, քան թէ նա: Մենք չենք խօսում նրա ներքին կացութեան, նրա վնասակար ազդեցութեան մասին իւր շրջապատող ժողովրդի վրայ: Այստեղ նա իւր ժողովրդի կատարեալ ցեցն է, այս հաստատուած մի իրողութիւն է, որ ոչ ոք չի կարող հերքել: Մենք խօսում ենք այն արտաքին վնասների մասին օտարների աչքում, որ կրում է դարերով սրբա-

գործուած Հայ ազգի անունը, վարկը, պատիւը, շնորհով այն հարստահարիչ եւ ձրիակեր տարրի, որ կոչվում է վաճառականութիւն:

Այս դառն խօսքերը մեր գրիչն արտայայտում է իշտալի մոտամուկների ազդեցութեան ներքոյ: Չի անցնում օր, որ իւր ազգի բարոյականութեան նախանձախնդիր Հայը չկարդայ կամ չլսի օտարից յանդիմանութիւններ, թէ Հայ ժողովուրդը կեղծաւոր է, շողոքորթող է, ժլատ է, հարստահարիչ է, եւ այլ այսպիսի վիրաւորական ածականներ: Արդարացի՞ են արգեօք այս դառն յանդիմանութիւնները հինգ-վեց միլլիօն հոգուց բաղկացած մի բազմաչարսար պատմական ազգի վերաբերմամբ, որի ամբողջ իննը տասներորդականը բաղկացած է գիւղացիներից, արհեստաւորներից եւ ժլատութեան, հարստահարութեան, կեղծաւորութեան հանգամանքներից զերծ դասակարգերից:— Ո՛չ, արդարացի չէ, անիրաւ է: Բայց իրաւունք ունի օտարը, երբ միշտ մեր երեսին շարտում է այդ կեղտոտ ածականները:— Այո՛, կատարեալ իրաւունք ունի: Ի՞նչ աղբիւրներից է օտարը վերցնում իւր գաղափարը Հայ ազգի մասին, այն օտարը, որ ծանօթ չէ մեր բուն ժողովրդի հետ:— Հարկաւ, այն աղբիւրներից, որ աւելի մօտիկ են իրեն: Եւ այդ աղբիւրը Հայ վաճառականութիւնն է: Պշտօր աղբիւր: Ի՞նչ գոյներով է ներկայանում ինքը Հայ վաճառականը իւր հայրենիքից դուրս օտարների առջեւ եւ ի՞նչ գոյներով է պատկերացնում իւր ազգային առանձնայատկութիւնները: Ահա մի հարց, որը դառն մոտամուկներ է առաջ բերում:

Հայ վաճառականը իւր հայրենիքից դուրս նախ եւ առաջ ոչ մայրենի լեզու ունի, ոչ ազգային պարտաճանաչութիւն եւ ոչ էլ հասարակական ինքնասիրութիւն: Նա գոյն չունի: Նա բոլորին, ում հետ կապուած է գործով, ամենից առաջ աշխատում է դիւր գալ թէ կեղծաւորութեամբ, թէ շողոքորթութեամբ: Նա խօսում է միշտ իւր ձեռնարկութիւնների, առեւտուրի, վաստակի, վնասի մասին, եւ խօսում է ամեն լեզուով, բացի իւր մայրենի լեզուից, թէեւ ոչ մի լեզու օրինաւոր չգիտէ: Չկայ նրա համար ոչ մի հետաքրքրութեան եւ խօսակցութեան արժանի խնդիր, բացի նիւթականից: Երկաթուղում եւ շոգենաւի վրայ, չորում եւ ցամաքում, հիւրանոցում թէ շուկայում, թատրոնում թէ իւր օտարազգի ծանօթի ընտանիքներում նրա խելքը գործում է միեւնոյն ուղղութեամբ: «Շահ կըլինի արդեօք», — ահա այն հարցը, որ կաշկանդած պահում է միշտ եւ ամեն տեղ նրա ուղեղի բոլոր ծալքերը: Նրա հոգեկան բարձրագոյն զուարճութիւնը -- հեշտախտութիւնն ու անասնական ոգեւորութեամբ ուտել եւ խմելն է: Ընկերների առջեւ նա շփանում է իւր պղծասիրութեամբ, անառակութեամբ, օտարների մօտ երբէք չգիտէ ոչ իւր անհատական եւ ոչ ազգային արժանաւորութիւնները մաքուր գոյներով ներկայացնել: Բամբասել օտարի առջեւ իւր ազգակիցներին, իւր ընկերոջ պատուի գնով իւր առեւտրական վարկը բարձրացնել, — ահա նրա յատկանիշը: Չզուելի է նա իւր ճանապարհորդութեան ժամանակ մանաւանդ, երբ հանդիպում է կին հասարակութեան: Այստեղ նրա խելքն

ու սիրտը չեն կարողարում արտայայտել ոչ մի մաքուր ձգտում, ոչ մի անկեղծութիւն: Առաքինի հերոսութեան մասին նա գաղափար անգամ չունի: Իւր ամուսնական սրբութիւնն ընտանիքից դուրս օտար երկրում պղծել նրա սովորական ախտն է: Ուստի նա միշտ ապակաշուած է ինչպէս բարոյապէս, նոյնպէս եւ մարմնապէս:

Սուտ ասել, խաբել, առանց այս երկու զէնքերի Հայ վաճառականն ինչպէս իւր հայրենիքում, նոյնպէս եւ օտար երկիրներում գործել չգիտէ: Հարիւրաւոր օրինակներ կարելի է առաջ բերել, թէ ինչպէս Հայ վաճառականները նախ գրաւել են օտար գործարանատէրերի հաւատարմութիւնը, ապա, մեծ քանակութեամբ ապառիկ ապրանքներ վերցնելով, փախել են եւ սուտ անանկ հրատարակել իրենց: Այդ ախտը ոչ մի ազգի վաճառականութեան մէջ այնքան տարածուած չէ, որքան Հայերի մէջ:

Այս է ահա Հայ վաճառականի տիպարը, այս է այն տարրը, որ թափառելով ամեն երկիրներ, շփուելով օտար ազգերի հետ, անխիղճ կերպով արատաւորում եւ ոտնակոխ են անում Հայի անունը: Եւ ահա թէ ինչո՞ւ մենք անուանեցինք վաճառականին Հայ ազգի կատաղի թըշնամի: Պէտք է ամենայն կերպ հարուածել այդ կեղտոտ, ապակաշուած մարմինը, որ չարաչար վնասներ է գործել մինչեւ այժմ եւ դեռ շարունակում է գործել:

II.

Շարունակենք մեր նշտրակն աւելի խոր մտցնել Հայ մարմնի այն թարախալից պալարի մէջ, որ անուանւում է վաճառականութիւն:

Ամեն մի ճշմարիտ համոզմունք, առհասարակ, կազմւում է լրացուցիչ փաստերի զօրութեամբ: Եթէ հիմունք չունենայինք, մենք ներկայ յօդուածների վերնագրով չէինք սկստիլ մեր հասարակութեան մի ահագին դասակարգը—վաճառականներին: Իրաւ, Հայ վաճառականներին մենք համարում ենք Հայ ազգի կատաղի թշնամի այն բազմութիւն փաստերի հիման վրայ, որ ամեն օր տեղի են ունենում մեր շուրջը: Անցեալ անգամ մենք մատնացոյց արինք այդ փաստերի միայն մի յայտնի մասի վրայ: Բայց կան աւելի զօրեղները:

Որքան Հայ վաճառականը՝ իւր հայրենիքից դուրս, ճանապարհորդութեան ժամանակ, ապականուած է, կրրկնակի վատթար է նա իւր բնականայրում (չենք ասում հայրենիքում, մեր վաճառականը հայրենիք չունի), իւր գործունէութեան, այսպէս ասած, բուն պատուանդանի վրայ: Այստեղ արդէն Հայ վաճառականը,—լինի նա փերեզակ, վաշխառու, դրամատէր թէ կապալառու,— իւրաքանչիւր մտածող մարդու առջեւ ներկայանում է իբրեւ մի իրականացած զղուանք: Նրա կազմը բովանդակ ներխուած է. անհնարին է գտնել մի առողջ տեղ

այդ կազմի մէջ, որի վրայ կարելի լինի մատ դնել եւ յետ վերցնել չապականուած: Եւ այդ մարմինը մանաւանդ գարշ տեսարան է պատկերացնում մեծամեծ քաղաքներում՝ սկսած Պոլսից մինչեւ Թիֆլիզ: Փերեզակ — մանրավաճառը կոպիտ, խաբեբայ, լկտի: Հարուստ խանութպանը շողոքոթող, օրական հարիւր անգամ Աստու անունով սուտ երգուող եւ հինգ հարիւր անգամ նոյն Աստու գէմ մեղանչող: Կապալառուն խարդախ: Նրամատէր—տոկոսական անխիղճ՝ տոկոսներով իւր պարտականների կաշին բուխ դանակով քերթող:

Ով որ պարզամիտ է, նա յիմար է, խակ ով որ յիմար է, նա պիտի հարստահարուի, — ահա այն մութ առանցքը, որի շուրջը պտտում է Հայ վաճառականի մտաւոր ընդունակութիւնը: Սրտի դատաստանը եւ խղճի օրէնքը վաղուց հետէ նրա համար գոյութիւն չունին. կայ միայն արտաքին իրաւունք: «Պայման ենք կապել, պիտի վճարես, տուգանք ես խոստացել, պիտի տուժես, — ահա այն պարունը, որով նա խեղդում է իւր ձեռքը ընկնողներին: Եւ բացի այդ յամուռ դատաստանից, նրա համար չկայ մի ուրիշ մարդկային օրէնք՝ թէ օտարազգիների եւ թէ իւր համազգիների վերաբերմամբ: Մենք մեր այդ խիստ խօսքերի ճշմարտութիւնն ընթերցողների համար անհրաժեշտ կացուցանելու նպատակով առաջ կրբերենք բազմատեսակ փաստեր, եթէ մեր ասածը կարօտ է որեւէ ապացոյցի: Փաստեր, որոնք բացառութիւններ չեն, այլ մի կանոնաւորուած օրէնք մեր վաճառականութեան ասպարէզում:

Այժմ հարց.—Ո՞ր եւրոպացի օտարը կարող է ներ-
բողներ կարդալ մի այդպիսի հասարակութեան. որ
շրջապատող ազգաբնակութիւնը կարող է սիրել մեզ,
եթէ նա ի նկատի ունի մեր բազմադաս ազգի մէջ մի-
միայն վաճառականներին: Հարց՝ իւր ազգային պատուա-
ճանաչութեան նախանձախնդիր Հայը որ մէկին կարող
է բացատրել, թէ Հայ վաճառականի համար չկայ
խտրութիւն ոչ կրօնի եւ ոչ ազգութեան, թէ նրա
համար միեւնոյն է՝ հարստահարութեան աղբիւրն այլ-
ազգին է, թէ իւր արիւնակից հայը, նոյնիսկ իւր
ընկերն է, թէ իւր հարազատ եղբայրը:

Բայց մեր ամենամեծ դժբախտութիւնն այն է, որ
մենք դեռ այդպիսի նեխուած արարածներին հասարա-
կական աստիճանների վրայ առաջին տեղերն ենք տա-
լիս, մենք երկրպագութիւն ենք տալիս, խոնարհւում
ենք նրանց առջեւ: Ինչո՞ւ:—Նրա համար որ նրանք յա-
նուն իրենց գրպանի՝ մետաղի գնով վաճառում են այն,
ինչ-որ մենք վաստակել ենք դարերի ընթացքում—մեր
անունը, պատիւը, մեր ազգային ինքնասիրութիւնը:
Յերեկը երեսուն տոկոսով պարտք տուող մի վաշխառուի
տանը մենք երեկոյեան ընթրում ենք, մասնակից ենք
լինում ուրիշների արիւնի եւ քրտնքի գնով ձեռք բե-
րած սեղանին: Այդ ապականութեան վերին ծայրն
է կարծես, էլ աւելի հեռու գնալ չի կարելի: Բայց հաս-
կացէք, որ մենք գնում ենք դեռ աւելի եւ աւելի հե-
ռու:—Մեր լրագրութեան եւ գրականութեան մէջ ծա-
խու գրչակներ որքան անգամ եւ որպիսի ներբողներ
են կարդում այն ապականիչներին, որոնք ազնւութիւն

են համարում անազնութեամբ վաստակած հազար-
ներից մի քանի կոպէկներ շարտել ազգային բարեգոր-
ծական սեղանի վրայ: Եւ միթէ այդպիսով չի կրկնա-
պատկիւում այն վնասը, որ ստանում է Հայ ազգի ա-
նունը իւր ապերախտ զաւակներից: Միւս կողմից՝ միթէ
նոյն հարստահարիչներն աւելի չեն խրախուսւում, ինքն
ըստ ինքեան կանգնելով այն խաւար համոզմունքի վը-
րայ, թէ «այո՛, մենք կարող ենք անընդհատ կեղեքել
սրան ու նրան, լցնել մեր գրպանները հարիւր հա-
զարներով, եւ յետոյ մի քանի հարիւր ռուբլի նուիրելով
ազգային այս եւ այն հիմնարկութեան կամ եկեղեցուն,
եւ հասարակութեան մէջ բարոյական վարկ վաստակել»:
Ոչ, վաճառականը ռուբլիներով չի կարող արդարացնել
իւր անցեալը եւ ներկան. նրա մեղքն անքան ծանր է
եւ տուած վնասներն անքան բարդ, որ եթէ իւր ամ-
բողջ կարողութիւնն անգամ դնի քաւարանի գանձա-
րանում, հազիւ թէ կարողանայ զտուել մաքրուել Հայ
ազգի աչքում: Ի՜նչ, միթէ կարծում էք, որ բարոյական
յանցանքը կարելի է նիւթական նուիրատուութեամբ
սրբագործել, եւ միթէ հաւատացած էք, որ նուիրա-
տութիւնը բարեգործութիւն է:—Ոչ, այդ սխալ է:

III.

Երբ մարդս ուսումնասիրում է այն եւրոպացի ծանապարհորդներին, որոնք մեր երկիրն իրենց նկարագրութեան առարկայ են շինել, երբ ի մի է գումարում այն կարծիքը, որ եւրոպայում տարածուած է մեր մասին, երբ ուշադրութեան է առնում այն զգացմունքները, որոնցով դէպի մեզ վերաբերվում են մեզ շրջապատող ազգերը, — նա պէտք է այն եզրակացութեան հասնի, թէ Հայ ազգի նկատմամբ տեղի է ունեցել եւ տեղի ունի արդարութիւնը սանալոյս անող մի վարմունք, որի դէմ պարտաւոր է իւր հոգու բոլոր ոյժերով բողբել ամեն մի Հայ, որ շատ թէ քիչ նախանձախնդիր է իւր ազգի պատուին եւ բարոյական վերածնութեան գործին. նա պէտք է համոզուի, որ կատարվում է մարդկութեան պատմութեան մէջ տակաւին չտեսնուած մի անիրաւութիւն այն ազգի նկատմամբ, որ իւր ընտիր յատկութիւններէ եւ առաքինութեան համար միմիայն յարգանքի ու խորին համակրանքի է արժանի:

* *

Մեր խօսքն այն անուրանալի փաստի մասին է, որ մեր վաճառական դասակարգին յատուկ պակասութիւնները վերագրվում են բովանդակ Հայ ազգին: Այս պատ-

ճառով մեր ազգը կոչում են վախկոտ, աչքածակ, արծաթասէր, խորամանկ, շողորթոթող, նախանձոտ, ծանր աշխատանքից վախչող, եւ այլն եւ այլն: Մենք լսել ենք եւ գիտենք, որ գրեթէ ամեն մի ազգին (իւր ամբողջութեամբ) միւս ազգերը վերագրում են այս կամ այն պակասութիւնը: Այսպէս, ասում են, որ ֆրանսիացիք թեթեւամիտ են, գերմանացիք — կոպիտ, անգլիացիք — եսական, եւ այլն եւ այլն. բայց մի քրիստոնեայ, երկրագործ ազգի անուան առաջ շարել այնքան ստորացուցիչ ածականներ, որը մենք ամաչում ենք այստեղ կրկնել, այդ չէ լսուած, չէ տեսնուած:

* *

Արդեօք կարելի է, կըհարցնէք դուք, մի դասակարգին յատկանշիչ պակասութիւնները, ախտերը վերագրել ամբողջ ազգին:

Արդեօք իրաւացի է աննշան փոքրամասնութեան գործած յանցանքների համար պատասխանատու անել ահագին մեծամասնութիւնը:

Արդեօք ներելի է մի փոքր ի շատէ սուր դիտողի բացառապէս մի դասակարգի ներկայացուցիչներին աչքի առաջ ունենալով, դատապարտել ամբողջ ազգը:

Անշուշտ կարելի չէ, իրաւացի չէ, ներելի չէ, բայց... բնական է. մարդս գտնում է իրեն անյայտ մի ազգի մասին այն անհատներով, որոնց հետ նա բախտի բերմամբ ծանօթանում է, եւ այս երեւոյթի հիմքը պէտք է որոնել մարդուս մտապատկերները, գաղափա-

րակազմութիւնը ղեկավարող հոգեբանական օրէնքների մէջ: Եւ ահա եւրոպացին, որ մինչեւ վերջին ժամանակները բացառապէս եւ այժմ մեծ մասամբ Հայ անուան հետ ծանօթանում է վաճառականների միջնորդութեամբ, բնականապէս մի ամենաանպատ քաղաքար է կազմել մեր մասին:

* *

«Լոկ կեղեւ տեսնել չէ սուր աչերու», ասում է Հայ բանաստեղծը, բայց եւ նոյնիսկ միմիայն «լոկ կեղեւ» տեսնելու ընդունակ մարդը կը համաձայնի մեզ հետ, եթէ խելամուտ լինի իրականութեան, կեանքին, նրանում տեղի ունեցող փաստերին:

Ինչո՞ւ, ասացէք խնդրեմ, Գերմանիայում, որ աշխարհիս ամենազօրեղ, ամենալուսաւորեալ երկիրն է, Հայոց ազգի մասին ընդհանրապէս մի նպաստաւոր գաղափար է տիրապետում:—Առաջին պատճառը գերմանացու լուսաւորութիւնն է: Գերմանացին իւր աշակերտութեան միջոցին ուսել է, թէ մի սրբազան լեաւոր կայ, որ գտնվում է Հայաստանի սրտում եւ կոչվում է Արարատ: Հին կլասիքներին ուսումնասիրելիս նա հանդիպում է յաճախ Հայ անուան, որ պատուով յիշվում է հին աշխարհի ազգերի կարգում: Միջին դարերի պատմութիւնը նրան ուսուցանում է, որ երախտապարտ պէտք է լինի գէպի Հայոց թագաւորութիւնը, որ օգնութեան ձեռք մեկնեց խաչակիրներին խաւամի դէմ մղած պատերազմների միջոցին: Իսկ ներկայումս նա

տեսնում է իւր հայրենիքի համալսարանական քաղաքներում երիտասարդութիւն, որ այնպիսի տոկոսութեամբ աշխատում է, այնպիսի եռանդով ձգտում է սեպհականել իրան գերմանական գիտութիւն, այնպիսի ոգեւորութեամբ իւրացնում է բարձր քաղաքակրթութիւնը, մի երիտասարդութիւն, որ առաջին տեղերից մէկն է բռնում Գերմանիայի օտարազգի ուսանողութեան մէջ: Այս է առաջին պատճառը: Երկրորդ պատճառն այն է, որ Աստծու ողորմութեամբ, մեր վաճառականները դեռ եւս ոտ չեն կոխում այդ երկիրը, առեւտրական յարաբերութիւններ չունին նրա հետ:

Ինչո՞ւ Քալիցիայում Հայի անունն այնքան յարգուած է, Հայերն այնպիսի մեծ դեր են խաղում լեհական հասարակութեան մէջ:—Որովհետեւ այնտեղի Հայերն երկրագործութեամբ են պարապում, իսկ մեր վաճառականները, գոհութիւն Աստուծոյ, իրանց ներկայութեամբ չեն պատվում այդ երկիրը:

Ինչո՞ւ Անգղիայում, Իտալիայում, Յունաստանում այնքան աննպաստ կարծիք ունին մեր մասին, որովհետեւ Հայ վաճառականները դժբախտապէս նպաստաւոր են համարում իրանց համարար գերկիւններում խրիդանել:



Ինչո՞ւ, եթէ դառնանք առանձին քաղաքների օրինակներին, Մարտիլում ընդհանուր տարածուած կարծիք է, թէ Հայերից (եւ, միխիթարուհեք, ճապօնացիներից)

վատ ազգ չկայ աշխարհիս երեսին, իսկ Դօրպատում մի տիրապետող գաղափար է, որ Հայերն ընտիր յատկութիւններով օժտուած եւ ջերմ համակրութեան արժանի ազգ են: — Որովհետեւ Մարտէլի հետ ամենասերտ յարաբերութիւններ ունին մեր վաճառականները, իսկ Դօրպատը իւր պատերում տեսել է միջանի սեղունդ հայազգի ուսանողութիւն:

Ինչո՞ւ բոլոր ճանապարհորդները, որոնք միայն Կովկասի կամ Թիւրքիայի մեծամեծ քաղաքներն են այցելել, պախարակում են մեր ազգը, եւ ինչո՞ւ այն գիտնականները, որոնք եղած են Ռուսական կամ Տաճկական Հայաստանի խորքերում, այնպիսի համակրութեամբ են վերաբերւում դէպի մեզ: — Որովհետեւ քաղաքներում նրանք հանդիպել են մեր անունը կոտորող վաճառականներին, իսկ այն վայրերում, որոնք կաղմում են հին Հայաստանի մասերը, նրանք տեսել են քրտինքը երեսի վրայ, իւր հալալ ապրուստը վաստակող երկրագործ դասը:

Ինչո՞ւ . . . :

IV.

Մեր միակ նպատակն էր Հայոց ազգի նկատմամբ տեղի ունեցած մի վրդովեցուցիչ անիրաւութեան

դէմ բողոքելու, նրա թանկագին անունը՝ անարգարութեամբ բարձած արատներից մաքրելու, — սակայն, ինչպէս պէտք էր նախատեսել, մեծ աղմուկ հանեց՝ մեր ազգային պատին օտարների աչքում կոտորող, ոտնակոխ անող դասակարգի մէջ, մեծ ցատոյթ պատճառեց պ. պ. վաճառականներին: Նրանք հարկաւոր համարեցին վիրաւորուել. . . : Այո՛, այդ զգացմունքն անտեղի չէր, այլ նրանք հաշուեցին, թէ զայրացած ձեւանալով՝ միամիտներին եւ թերահաւատներին կապացուցանեն, թէ իրենք եւրոպական մոդով վաճառականներ են եւ ոչ թէ հայկական առեւտրականներ, թէ իրենք են իրենց ապրանքի տէրերը եւ ոչ թէ ուրիշները, թէ իրենց մէջ եղած սակաւաթիւ դրամատէրները հալալ աշխատանքով են հարստացել եւ ոչ թէ պախարակելի միջոցներով, եւ այլն: Այնուհետեւ սկսեցին յօդուածագրի դէմ գործ դնել այն միջոցները, որոնք մեր վաճառականութեան մէջ ամենադժուրներն են համարուած հակառակորդի դէմ, այն է՝ ձեռնարկեցին անկիւնից յարձակումներ անել, քաջութիւն ունեցան մեր վերաբերութեամբ զանազան զրպարտութիւններ տարածել, գտան մինչեւ անգամ իրենց բարոյական մակերեւոյթին վայել մի օրգան, ուր հրապարակ դուրս բերին մեր անձնաւորութեան դէմ իրենց արբանեակներից մէկին, ի հարկէ նախապէս դիմակ դնելով նրա երեսին, յանդգնեցան (հասկանալի բան է գաղտագողի կերպով) սպառնալիքներ արտասանել. . . : Ողորմելի մարդիկ. կարծես թէ մեզ մի այլ զգացմունք կարող է ղեկավարել մեր գործունէութեան մէջ, բացի ընդհանուր արդար դատը. եւ

կարծես թէ դրանց զրպարտանքները երբեւիցէ կարող են հասնել մեր արհամարհանքի բարձրութեանը:

Սակայն վերոյիշեալ վարմունքը միանգամայն բնական էր մեր սօվդագարների կողմից եւ հացի խնդր՝ նրանց ջատագովների համար. մեզ չափազանց պարզամիտ պէտք է համարէին, եթէ կարծէին, թէ մենք մի այլ վերաբերութիւն էինք սպասում:

Իայց տհա նրանց պաշտպան է հանդիսանում մի լրագիր, որից մենք իրաւունք ունէինք յուսալու, որ մեզ հետ համերաշխ կրգտնուի այս խնդրի մէջ. թէեւ «Մշակն» էլ, հանգուցեալ Նաղարեանցի օրինակին հետեւելով, գործած է այն մեծ սխալը, որ օտարների հետ միասին վերագրել է ամբողջ ազգին յատկութիւններ, որոնք լոկ նրա մի դասակարգի անլիճելի սեպհակա-նութիւնն են կազմում: Սակայն պ. Արծրունու փաստաբանութիւնը մի անսովոր ձեւ ունի. աչքի առաջ ունենալով, որ ազգային պատուին նախանձախնդիր մարդն անկարող է այսպիսի արատաւորուած դասակարգի պաշտպանութիւնը յանձն առնել, պ. Գր. Արծրունին փոխանակ դրական հիմունքներ յառաջ բերելու, հետեւում է բացասական ճանապարհի. նա ձգտում է ուրիշ դասակարգերին մնայլ գոյներ յատկացնելով, նոյնիսկ անձնաւորութիւններ շօշափելով, մի սեւ քօղ ձգել այն արատների վրայ, որոնք յատուկ են մեր վաճառականներին: Անկողմնապահ լինելու համար սկզբից պէտք է յիշենք, որ պ. Արծրունին, երկար ժամանակ որոնելուց յետոյ, երկու արժանաւորութիւն է գտել «խոշոր արատների» տէր վաճառական-

ների մէջ. նախ՝ որ նրանք պահպանել են ընտանեկան շրջանում մայրենի լեզուն, եւ երկրորդ՝ որ մասնակցում են ամեն տեսակ բարեգործական, ուսումնարանական եւ այլ հաստատութիւններին:

Առաջին մոքին անարդարութիւն կը լինէր մեր կողմից պատասխանել բանաստեղծի հարցումով.

«Ո՞ր է Հայը, միթէ նա է, որ խօսում է Հայ լեզուով»:

Ոչ, մենք քաջ գիտենք, որ լեզուն այն անհերքելի շաղկապն է, որ միացնում է ազգի բոլոր անդամներին մի հոգեւոր կապով, որ լեզուն ազգայնութեան ամենաորոշ յատկանիշն է, որ եթէ օտար լեզուն մոռնում է գերդաստանի մէջ եւ ամենօրեայ խօսակցութեան լեզու է դառնում, ազգային լեզուի գոյութեանը մեծ վտանգ է սպառնում, որ այն ազգը՝ որ պահպանել է իւր լեզուն, իւր բանտի բանալին իւր գրպանումն ունի . . . : Սակայն, ցաւ ի սիրտ, պէտք է խոստովանուենք, որ «Մշակի» նկատողութիւնը ճիշդ չէ: Մայրենի լեզուն, մայրենի բարբառը վաճառականները պահպանել են գերդաստանի մէջ միմիայն այն տեղերում, ուր հայերէն լեզուն տիրապետող է, իսկ այնտեղ, ուր նա ընդհանուր տարածութիւն չունի, վաճառականներն աւելի են ենթարկւում օտար լեզուի ազդեցութեանը, քան միւս շրջանները: Թուրքիայի Հայոց մտաւոր կենդրոնի մէջ, Կ. Պօլսում, շատ եւ շատ վաճառականական, մանաւանդ հարուստ շրջանների գերդաստաններում հայերէնը չէ տիրապետող լեզուն, նոյնը տեսնում ենք եւ Ռուսաստանի Հայոց մտաւոր կենդրոնում, որ համարուած է Թիֆլիզը:

Գալով վաճառականների մասնակցութեան բարեգործական, ուսումնարանական եւ համանման հաստատութիւններին, մենք այն խորը՝ բազմաթիւ փաստերի եւ թուանշանների վրայ հիմնուած, համոզմունքն ունինք, որ ազգային պարտաճանաչութեան զգացմունքը վերին աստիճանի թոյլ է մեր առեւտրականների մէջ։ Մենք կասենք, որ այդ տեսակ նուիրատուութիւններ նոյնիսկ համեմատաբար շատ եւ շատ չնչին են, եւ մի օրինակ միայն բերելու համար, կրքաւականսնանք միտնանիշ անել ջերմ՝ զգացմունքներով գրուած մեր աշխատակցի այսօրուայ յօդուածի վրայ, աւելացնելով, որ Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան 170 անգամներից միմիայն 78-ը վաճառական են, իսկ մնացեալ 92-ը պատկանում են մեր գրականութեան, մամուլի, դպրոցների մէջ գործողներին, միով բանիւ մտքի մշակներին եւ վաճառականութեան հետ ոչինչ կապ չունեցող շրջաններին։ Համաձայնեցէք, որ Թիֆլիզի առեւտրականների համար, ուր ամեն մի քայլափոխում երկու խանութ կայ, 78 եւ 78×5 թուանշաններն առատաձեռնութեան ապացոյց չեն։

Բայց, ըստ էութեան, պ. Գր. Արծրունու պաշտպանողական ճառը հիմնուած է ուրիշ դասակարգերին դատապարտելում։ Մեր ընդհանուր պատասխանն այս է. մեր վաճառականական դասակարգի մէջ եւս կան այնպիսի անձինք, որոնք ամօթ չեն բերիլ ուրիշ ազգերի առեւտրականներին, բայց մեր խօսքն ընդհանուրի 95% մասին է եւ ոչ թէ խիստ սակաւթիւ հազիւ 3—5 տոկոսիք կազմող բացառութիւնների մասին։ Մինչդեռ

պ. Արծրունին միւս դասակարգերի բացառութիւններին ընդհանուր նշանակութիւն է տալիս. բացառութիւնը կանոն է դարձնում, իսկ կանոնը բացառութիւն։

Մենք յօդուածների մի ամբողջ շարք ենք նուիրելու՝ ազգիս արդարեւ կատարի թշնամու իսկական պատկերը ներկայացնելու համար հասարակութեան առաջ. մենք ամենայն բարեխղճութեամբ քննելու ենք մեր միւս դասակարգերն եւս, եւ այն հաւատն ունինք, որ կը համոզենք ամենքին, որոնց համար «Թէեւ Մ երկուրը թանգ է, բայց աւելի թանգ է ճշմարտութիւնը», ամենքին, որոնց սրտում աւազի հատիկի մեծութեան չափ ազգային պատուասիրութեան սերմ կայ, ամենքին՝ որոնք կանխակալ կարծիքների ստրուկ չեն, թէ պատմութեան մէջ չտեսնուած անարգարութիւն է մեր ազգի անուան առաջ շարել աշխարհիս ամենաստորացուցիչ ածականները, թէ անների յանցանք է անցեալի, ներկայի եւ ապագայի դէմ, խղճի դէմ, ամենանուիրական գաղափարների դէմ, որ մեր վաճառականական դասակարգին յատուկ ախտերը վերագրում են բովանդակ ազգին։

Մ.

Խօսելով մեր վաճառական դասակարգի դատապարտելի կացութեան մասին, մենք, եթէ յիշում է ընթերցողը, ակնարկեցինք եւ այն հանգամանքի վրայ,

որ Հայ հասարակութեան այդ մասը իւր բոլոր ախտերով հանդերձ նկրտումներ ունի բարեգործ անունը կրելու։ Մենք ասացինք, որ վաճառականն այսօր մեղանում ոչ միայն հասարակական բարձր դիրք է վայելում, այլեւ նա համարում է իրեն բարեգործ, մարդասէր։ Եւ ոչ միայն ինքը, վաճառականն ունի այդ համարումը իւր մասին, այլեւ նա բարեգործ համարվում է ուրիշ դասակարգերի եւ, որ ամենալուրջալիս է, նոյնիսկ մեր լուսաւորուած անհատների կողմից։ Մեր յօդուածները երեւան գալուց յետոյ, այդ սխալ եւ միանգամայն դատապարտելի կարծիքն աւելի որոշ կերպով լսելի եղաւ յայտնի շրջաններից, թէ բերանացի եւ թէ գրաւոր։

Ուստի մենք, մեր խոստման համաձայն, կամենում ենք երկու խօսքով բացատրել, թէ ինչ ասել է բարեգործութիւն։ Այնուհետեւ թող ամեն ոք խորհի՝ արդեօք արժանի է Հայ վաճառականը բարեգործի վեհ անունը իւր ճակատի վրայ կրելու, արդեօք նա գիտէ՞ ինչ ասել է բարեգործութիւն, թէ՞ այդ ճակատագրի մի դառն կատակն է, որ Հայ ազգն այսօր անգամ երախտապարտ է համարվում մի դասակարգի առջեւ, որը ինքն իսկապէս երախտամոռ է։

* * *

Բուն բարեգործութիւնը մի գործողութիւն է, որ բխում է մարդկային սրտի բնական եւ մի անկեղծ զգացմունքից, այն է՝ օգնել անօգնականին։ Դարերից

ի վեր այդ զգացմունքը մարդու հոգեկան եւ բարոյական առանձնայատկութիւններից ամենասուրբը, ամենաազնիւն է համարուել։ Առաքինութեան նախանձախնդիր բոլոր մեծ քարոզիչներն իրենց բարոյական վարդապետութեան գլխաւոր հիմք ընդունել են միշտ բարեգործութիւնը։ Սկսած անդրապատմական ժամանակներից մինչեւ Հնդկական Բուդդան, Չինական Կօնֆուցիւս եւ մեր Մեծ Մարդասէրը, իւրաքանչիւրն աշխատել է տարբեր միջոցներով, բայց գրեթէ նոյն հիմնական գաղափարով, այդ վեհ զգացմունքը միշտ վառ պահել եւ աւելի զարգացնել մարդկութեան մէջ։ Եւ երբ սկսել է վերջինի սրտում պակսել բարութեան զգացմունքը, տեղի տալով անասնականին, կարծես, բնականաբար երեւան են եկել նոր քարոզիչներ, որ կակղացնեն քարացած սրտերը։

«Օգնեցէք թշուառներին», ահա Քրիստոսի բարձր պատգամներից բարձրագոյնը։ «Բայց օգնեցէք, աւելացնում է Մեծ Վարդապետը, այնպէս որ աջ ձեռքով տալիս, ձախ ձեռքը չիմանայ թէ տալիս էք»։

Արդ՝ ինչ է նշանակում այդ։ — Նշանակում է, որ բարեգործութիւնն այն է, երբ մարդ կարօտեալին օգնում է զրդուած լինելով սրտի խորքից բղխող անկեղծ անշահ եւ ինքնուրոյն զգացմունքից։ Հետեւաբար նա մի կրաւորական զգացմունք չէ, նա բնական է, որ ծագում է մարդու սրտում ակամայ, առանց շատ անգամ հաղորդակցութիւն ունենալու խելքի եւ դատողութեան հետ, ըստ որում բուն բարեգործը յաճախ

ոչ թէ դատելով, այլ զգալով, կարեկցելով է անում բարեգործութիւնը:

Եթէ ձեռքը գրպանը տանելիս բարեգործի գլխում ծագում է այն միտքը, թէ կարող է իւր տուածով փառք եւ բարեգործի անուն վաստակել, կամ եթէ մըտածում է, թէ այն մարդը, որին նա օգնում է, պիտի խոնարհուի իւր առջեւ, այն ժամանակ նա բարեգործի աստիճանից անպայման գլորվում է եւ ընկնում վաճառականի աստիճանի վրայ, քանի որ նա կամենում է իւր տուածի փոխարէնն ստանալ:

* *

Այսպէս ենք մենք հասկանում բարեգործութիւն ասած բարձր զգացմունքը, եւ այսպէս պիտի հասկանայ ամեն ոք, որ գիտէ մտածել եւ զգալ:

Ս. յիշմ' նայենք այդ տեսակէտից մեր բոլոր բարեգործների վրայ, որոնց մեծամասնութիւնը, մի առանձին պարծանքով, վաճառականը վերագրում է իւր դասակարգին: Վաճառականը մասամբ օգնել է եւ օգնում է մեր եկեղեցիներին, բարեգործական հիմնարկութիւններին, սովեալներին, հրկիզեալներին,—այո՛, այդ ճշմարիտ է: Բայց ի՞նչպէս է արել նա այդ, արդեօք կարօտեալին օգնելու վեհ զգացմունքից զրդուած, թէ մի այլ նպատակով:

Ո՛վ որ եղել է վաճառականական շրջաններում, ո՛վ որ երբեւիցէ, յանուն այս կամ այն կարօտեալի, դիմել է նրանց օգնութեան, այս հարցը կարգալիս նրա

առջեւ անշուշտ պատկերանում է վաճառական-բարեգործի իսկական հոգին:

Նախ եւ առաջ ճրագով պիտի որոնել գտնելու մի այնպիսի վաճառական, որ բարեգործութիւն արած լինէր կամաւոր կերպով, առանց ստիպման մի անձնաւորութեան կողմից: Միշտ կամ հարկաւոր է ժամերով քարոզ կարգալ վաճառականի գլխին, որ, վերջապէս, նրա՛ տալու համար կարճ ձեռքը ձգուի մինչեւ գրպանը, կամ հարկաւոր է, որ բարեգործութեան փոխարէնն նորան անմիջապէս խոստանալ մի գրական վարձ, որովհետեւ նա մտածում է այսպէս. — «Արդեօք, ի՞նչ մի օգուտ կըլինի ինձ, եթէ այս ինչ կարօտեալին օգնեմ»: Եւ այդ գէպքում մեծ նշանակութիւն ունի այն անձնաւորութիւնը, որ գիմում է յօգուտ կարօտեալների վաճառականի օգնութեան: Վաճառականը յաճախ, եթէ մի բան տալիս է, տալիս է ոչ թէ գործի համար, այլ այն մարդու խաթեր համար, որ գիմում է նրա օգնութեան, այդ եւս այն գէպքում, երբ գիմողը մի յայտնի մարդ է, որից նա մի որեւէ անկնկալութիւն ունի:

Երկրորդ՝ երբ նա նուիրում է մի բան, առաջին պայման՝ նա պահանջում է, որ հռչակուի իւր նուիրածը ի գիտութիւն աշխարհի, որպէսզի նա կարողանայ մեր ամեն ինչ արտաքին փայլով գնահատող հասարակութեան աչքում կուպէկանոց փառք վաստակել. որպէսզի նա հոգաբարձուի, եկեղեցաշէնի, դպրոցաշէնի, որդեգիր պահողի, ազգային խնամակալի, վերջապէս, բարեգործի անուան արժանանայ:

* *

Այդ՝ կարելի է այդ ինքնօրինակ շահագիտական զգացմունքը բարեգործութեան սրբազան անունով մկրտել, կարելի է բարեգործ անուանել այն մարդուն, որ տալիս է ոչ թէ օգնելու համար, այլ փոխարէնը կրթկնակի ստանալու մոքով: Այլեւս չենք խօսում, թէ ինչ քստմունքի միջոցներով է նա ձեռք բերել այն, որի մի չնչին կտորը շարտում է կարօտեալին:

Սակայն երեւում է, որ մեր մէջ ոչ միայն կարելի է, այլ եւ է՝ որ առեւտուրը ոչ թէ առեւտուր է անուանւում, այլ ազգասիրութիւն, մարդասիրութիւն եւ բարեգործութիւն: Եւ այդ միտքը յայտնում են ոչ միայն մեր Բարեգործ վաճառականները այլեւ վաղեմի նախապաշարմունքներով կաշկանդուած մեր լուսաւորւածները: Այդ է ամենազգազրախ, այդ է որ անբարոյականացնում է մի ամբողջ հասարակութիւն, եւ այդ է որ այսօր «Աստծու սուրբ տաճարում դպիրներն ու կեղծաւոր փարիսեցիներն են նստած»: Եւ այս մենք տեսնում ենք, որ նոյնիսկ գարշելի միջոցներով հարստութիւն ձեռք բերած մի հաստաւորի առջեւ սողունի պէս ստորանում են, ոտերն են լիզում իրենց անամօթ շրթթունքներով նոյն կեղտի միջից գլուխը բարձրացրած հասարակական գործիչներ: Բայց... սարսափելի է մամոնան. նրա հրապոյրների առջեւ երբեմն անդոր են հանգիստանում պահպանել իրենց արժանաւորութիւնը անգամ նրանք, որոնք ամենից աւելի պիտի հալածէին նրա ապականուած արբանեակներին . . .:

V.I.

Թիֆլիզի վերջին ազգահամարից երեւում է, որ քաղաքս 2416 առեւտրական խանութ ունի: Այլի առաջ ունենալով, որ ազգաբնակչութեան ընդհանուր թիւը 104,000 է, 43 բնակչին մի խանութ է ընկնում: Այս թուանշանը վերին աստիճանի խրատական է եւ մտածմունքների արժանի: Ընթերցողին մի գաղափար տալու համար, թէ որքան մեծ է այս յարաբերութիւնը, բաւականանք այստեղ յիշելով, որ Ռուսաստանի մայրաքաղաքում, որ արտասահմանի ապրանքներ է մատակարարում կայսրութեան համարեա թէ մի քառորդ մասին, եւ որ ներքին առեւտուրի կողմից եւս անհամեմատ բարձր է Թիֆլիզից— մեր խօսքը Պետերբուրգի մասին է—մի խանութ գալիս է ոչ թէ 43, այլ 94 բնակչի վրայ:

Միւս հայաբնակ քաղաքների վերաբերութեամբ համեմատն վիճակագրական տեղեկութիւններ չունինք, բայց ո՞վ չգիտէ, որ այս տեղերում եւս խանութների չափազանց մեծ թիւն աչքի է ընկնում ամեն մի ճանապարհորդի:

Եւ այս վաճառականների ահագին մեծամասնութիւնը կազմում են Հայերը:

Մի կողմ թողնելով առայժմ այս տխուր երեւոյթի պատճառները, որ տարափոխիկ հիւանդութեան կերպարանք է ստացել, այժմ առաջ բերենք, թէ ինչ է այս փաստի բնական հետեւանքը եւ նախ մի թեթեւ ակնարկ ձգենք, թէ ինչ նախապատրաստութիւն է պա-

Հանքիւմ մեղանում, որպէսզի մարդս կարողանայ վաճառական դառնալ, պատկանել մեր ազգի գլխին պատուհաս դարձած դասակարգին:

Արդեօք վաճառականը պէտք է միջնակարգ կամ գոնէ սկզբնական ուսում ստացած լինի,— ոչ. արդեօք նա պէտք է մի որեւէ եւրոպական լեզուի տեղեակ լինի,— ոչ. արդեօք նա հաշուապահութեան արհեստի հետ պարտաւոր է ծանօթ լինել,— ոչ. արդեօք պէտք է որ նա տարրական տեղեկութիւններ ունենայ ընդհանրապէս տնտեսական եւ մասնաւորապէս առեւտրական օրէնքների մասին,— ոչ. արդեօք հարկաւոր է որ նա օտար աշխարհ տեսած լինի,— ոչ:

Հարկաւոր է արդեօք որ նա իւր սկսած առեւտուրի համեմատ դրամագլուխ ունենայ, — այդ եւս ոչ:

Ուրեմն ի՞նչ պատրաստութիւն է պահանջվում, կըհարցնէք դուք:

Բաւական է, եթէ նա մի երկու երեք տարի գործակատարի պէս մի բան է եղել այս կամ այն վաճառականի մօտ, եթէ ընտելացել է այն անարժան ձեւերին, որոնք ընդունուած են «մուշտարու» վերաբերութեամբ, եթէ գիտէ կամ տեղեկացել է, թէ սրտեղից պէտք է գնել կամ բերել տալ ապրանքը, եթէ քանի մի հազար ռուբլի փող ունի կամ կարող է պարտք առնել իւր միամիտ ազգականից, կամ այստեղ այնտեղ վարկ բանալ իւր համար: Այս նախապատրաստութիւններից յետոյ, նա այնպիսի առեւտուր է սկսում, որով արդէն Կիրակոսը կամ Մարտիրոսը վաստակով զբաղուած են, վարձում է խանութ անպատճառ այդ Կիրակոսի կողքին

եւ այնուհետեւ մի քանի տարուց յետոյ Մ ա կ ա Ր ի ա կամ արտասահման է գնում խրիդի, եւ ահա ձեզ Հայ վաճառականը պատրաստ է:

Արդեօք այսպիսի մարդիկ կարող են կանոնաւոր կերպիւ առեւտուր անել. արդեօք՝ ոչ միայն մտաւոր զարգացման ստոր աստիճանի վրայ կանգնած այլեւ նոյնիսկ բարոյական սկզբունքներից համարեա թէ կատարելապէս զուրկ այդ վաճառականը կարող է ազնիւ ճանապարհով դրամ վաստակել:

Եւ ահա մենք տեսնում ենք, որ գոյութեան կռուի մէջ գլուխ դուրս տանելու, հասարակութեան մէջ փայլելու համար, վաճառականը շատ անգամ դիմում է խարդախութեան, խաբեբայութեան մաքսանենգութեան, անազնիւ միջոցների: Եւ որովհետեւ հարստութիւնն է միայն, որ կարող է նրան բարձրացնել իւր ստոր վիճակից, դրութիւն տալ ոսկւոյ ծարաւով վարակուած հասարակութեան մէջ, հետզհետէ նրա բոլոր մտաւոր ոյժերը, նրա սրտի բոլոր տենչանքները կենդրոնանում են փողի շուրջը: Այսպէս է կազմվում Հայ ազգի այն դասակարգը, որի բոլոր անգամները միեւնոյն կրօնն են դաւանում.— Հայ վաճառականի համար «խանութը դառնում է նրա եկեղեցին, դադգան—նրա սեղանը. դաւթարը—նրա աւետարանը, սնդուկը—սուրբ սրբոցը, ոսկին—նրա Աստուածը եւ վարկը—նրա դաւանութիւնը»:



ԱՌԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ



NL0415961

9(47.925)
2-85